ՀՀ ԿԳՄՍՆ «ԵՐԵՎԱՆԻ Ս. ԽԱՆԶԱԴՅԱՆԻ ԱՆՎԱՆ Հ. 184 ԱՎԱԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի (ԴՊՐՈՑ)
ԾՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ
2025-2026 ՈՒՍՏԱՐԻ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 5 **13.03.2026թ.**

«Երևանի Ս. Խանզադյանի անվան հ. 184 ավագ դպրոց» ՊՈԱԿ-ի ծնողական խորհրդի նիստին մասնակցել են բոլոր 27 անդամները:

Նիստին ներկա էին դպրոցի տնօրեն Տաթևիկ Մելքոնյանը, տնօրենի տեղակալ Գոհարիկ Գևորգյանը, տնօրենի ՄԿԱ գծով տեղակալ Աննա Թադևոսյանը, ՍԴԱԿ Հասմիկ Բաղդասարյանը, դպրոցի գլխավոր հաշվապահ Էռնա Մովսեսյանը, դպրոցի հոգեբան Դիանա Հովսեփյանը:

Օրակարգում՝

1. Արտագնա ուսումնական ճամփորդությունների կազմակերպման վերաբերյալ հարցի քննարկում:

/զեկուցողներ՝ դպրոցի տնօրեն Տ. Մելքոնյան,
դպրոցի ՄԿԱ գծով տեղակալ Ա. Թադևոսյան/

2. 12-րդ դասարանների սովորողների «Վերջին զանգ» մշակութային հանդիսությունը Սարդարապատի հերոսամարտի հուշահամալիրի տարածքում կազմակերպելու և անօրինական դրամահավաքությունն արգելելու մասին:

/զեկուցող՝ դպրոցի տնօրեն Տ. Մելքոնյան/

3.Դպրոցի բյուջեի կատարման մասին տարեկան հաշվետվությունների ներկայացում:

/զեկուցողներ՝ դպրոցի տնօրեն Տ. Մելքոնյան,
դպրոցի գլխավոր հաշվապահ Է. Մովսեսյան/

4. Այլ հարցեր:

Մինչ օրակարգային հարցերին անցնելը դպրոցի ԾԽ նախագահ Աննա Սեդրակյանը հաստատեց օրակարգը:

Լսեց-1. ***Արտագնա ուսումնական ճամփորդությունների կազմակերպման վերաբերյալ հարցի քննարկում:***

Տնօրենը խնդրեց տնօրենի ՄԿԱ գծով տեղակալ Աննա Թադևոսյանին ներկայացնել ծնողների և սովորողների առաջարկը՝ համադպրոցական ճամփորդություններ կազմակերպելու վերաբերյալ:

Աննա Թադևոսյանը նշեց, որ դպրոցի 10–11-րդ դասարանների սովորողները առաջարկել են ապրիլի 25-ին կազմակերպել հայրենագիտական ճամփորդություն դեպի Տավուշի մարզ՝ այցելելով Մակարավանք, Սրվեղի վանք, Քարերի լիճ և Ստեփանավանի դենդրոպարկ: Օրվա ավարտին նախատեսվում է նաև ժամանցային ծրագիր: Նա ընդգծեց, որ մեծ թվով սովորողներ ցանկություն են հայտնել մասնակցելու ճամփորդությանը:

Տնօրենը նշեց, որ դպրոցը չի խոչընդոտում նման նախաձեռնություններին և աջակցելու է դրանց կազմակերպմանը: Նա հավելեց, որ արդեն շուրջ 4 տարի դպրոցը հրաժարվել է նախկինում տարածված այնպիսի էքսկուրսիաների ձևաչափից, որոնք հիմնականում կրել են ժամանցային բնույթ: Ներկայում կազմակերպվող ճամփորդությունները պետք է ունենան կրթամշակութային հստակ նպատակ, ճանաչողական և հայրենագիտական ուղղվածություն, ինչպես նաև ապահովեն կոնկրետ վերջնարդյունք:

Տնօրենը կարևորեց նաև այն հանգամանքը, որ սովորողները գիտակցված են ընտրել ճամփորդության օրը՝ այն համադրելով Քաղաքացու օրվա հետ: Նա ընդգծեց, որ նման ճամփորդությունների նպատակը կերուխումը չէ, այլ հայրենիքի ճանաչումն ու միասնականության ամրապնդումը:

Ծնողական խորհրդի նախագահ Աննա Սեդրակյանը նշեց, որ ծնողները սիրով կմասնակցեն կազմակերպչական աշխատանքներին՝ ակնկալելով նաև ուսուցիչների աջակցությունը:

ԾԽ անդամները միաձայն ողջունեցին առաջարկը:

Դասղեկներ Նարինե Առաքելյանը և Հասմիկ Բաղդասարյանը տեղեկացրին, որ իրենց դասարանների ծնողները պատրաստակամ են աջակցել ճամփորդության կազմակերպմանը:

11-րդ դասարանի պատմության նպատակային խմբի ծնողական խորհրդի նախագահ Լուսինե Բայաթյանը նշեց, որ սովորողները մեծ ոգևորությամբ են սպասում ճամփորդությանը: Նա հավելեց, որ նրանք անհամբերությամբ սպասում են նաև համադպրոցական խարույկի շուրջ ուսուցիչների, երեխաների և տնօրենության մասնակցությամբ միասին նստելուն, երգելուն և անկեղծ զրույց ունենալուն:

10-րդ դասարանի տնտեսագիտական 2-րդ նպատակային խմբի ծնողական խորհրդի նախագահ Մարինե Պապյանը հավելեց, որ նման միջոցառումները հնարավորություն են տալիս բացահայտել սովորողների տաղանդները, ինչպես նաև նպաստում են նրանց միջև համագործակցության և համախմբվածության ամրապնդմանը:

Նույն կարծիքը հայտնեց նաև 10-րդ դասարանի լեզվաբանական 2-րդ նպատակային խմբի ծնողական խորհրդի նախագահ Քրիստինե Ղուկասյանը՝ ընդգծելով, որ նման նախաձեռնությունները կարևոր դեր ունեն սովորողների սոցիալական և ստեղծագործական զարգացման գործում:

Տնօրենը նշեց, որ համապատասխան իրավական ակտ կկայացվի, որով հստակ կսահմանվեն պատասխանատուները և դասղեկների գործառույթները՝ ճամփորդության պատշաճ կազմակերպումն ապահովելու նպատակով:

Որոշեց– 1. Ընդունել ի գիտություն և ապահովել համապատասխան աշխատանքների իրականացումը:

Լսեց-2. *12-րդ դասարանների սովորողների «Վերջին զանգ» մշակութային հանդիսությունը Սարդարապատի հերոսամարտի հուշահամալիրի տարածքում կազմակերպելու և անօրինական դրամահավաքությունն արգելելու մասին:*

Տնօրեն Տ" Մելքոնյանը ներկայացրեց 12-րդ դասարանների սովորողների «Վերջին զանգ» մշակութային միջոցառումը Սարդարապատի հերոսամարտի հուշահամալիրի տարածքում կազմակերպելու և անօրինական դրամահավաքությունների բացառման վերաբերյալ հարցը: Նա հիշեցրեց, որ 2024–2025 ուսումնական տարվա «Վերջին զանգ» մշակութային միջոցառումը կազմակերպվել էր Գառնու տաճարի տարածքում, որը հաջողված և հիշարժան էր բոլորի համար: Նշվեց նաև, որ այս տարի ևս շրջանավարտները մեծ ոգևորությամբ և անհամբերությամբ սպասում են իրենց հանդիսությանը: Նա տեղեկացրեց, որ 2026թ. մարտի 4-ին դիմել է ՀՀ ԿԳՄՍ նախարար Ժաննա Անդրեասյանին՝ ներկայացնելով, որ աշակերտական խորհրդի (12.02.2026թ. N 7) և ծնողական խորհրդի (15.10.2025թ. N 3) նիստերում քննարկվել և տնօրենի համաձայնությանն է ներկայացվել «Վերջին զանգ» մշակութային միջոցառումը պատմամշակութային միջավայրում՝ Սարդարապատի հերոսամարտի հուշահամալիրի տարածքում կազմակերպելու առաջարկը:

Տնօրենը նշեց, որ նախնական համաձայնություն է ստացվել «Սարդարապատի հերոսամարտի հուշահամալիր, Հայոց ազգագրության և ազատագրական պայքարի պատմության ազգային թանգարան» ՊՈԱԿ-ի տնօրինության կողմից՝ տարածքը դպրոցի

շրջանավարտներին տրամադրելու վերաբերյալ: Միջոցառման կազմակերպման համար նախատեսվող գումարը կազմում է 200 000 (երկու հարյուր հազար) ՀՀ դրամ:

Տնօրենը, վստահ լինելով, որ դպրոցը չունի ֆինանսական խնդիրներ և ունի տնտեսված միջոցներ, նախարարին խնդրել է թույլատրել նշված գումարի փոխանցումը դպրոցի բյուջեի համապատասխան ծախսային հոդվածից՝ բացառելով որևէ դրամահավաքություն: Նա վստահություն է հայտնել, որ խնդրանքը կստանա դրական արձագանք, քանի որ դպրոցը ֆինանսական դժվարություններ չունի և ունի տնտեսված միջոցներ:

ՀՀ ԿԳՄՍ նախարարի տեղակալ Արաքսիա Սվաջյանը 2026 թվականի մարտի 16-ին դրական պատասխան է ուղարկել դպրոցին՝ համաձայնություն տալով առաջարկությանը: Սահմանված կարգով տվյալ օրը նախատեսվում է տարածքի վարձակալում՝ 2 ժամ տևողությամբ:

Ծնողները միաձայն ողջունեցին առաջարկվող ձևաչափը:

Տնօրենը նշեց, որ նախատեսվում է կազմակերպել բովանդակային և «Վերջին զանգ»մշակութային միջոցառման դեկորատիվ և ստեղծագործական աշխատանքները իրականացվում են դպրոցի արվեստի ուսուցիչ Բիայնա Ասրյանի կողմից: Պատրաստվում են գրքերի մուլյաժներ, ինչպես նաև բատիկայի տարրերով հագուստներ, որոնց ստեղծման գործընթացում ներգրավված են նաև ծնողները:

Աննա Թադևոսյանն ասաց, որ ազգային 2 պար են շրջանավարտները նախատեսել պարել, և մեր աղջիկներին հագուստը անվճար կպարուրի «Ծովակ» պարային համույթի ղեկավար Հայկանուշ Վարդանյանը, նա մեր դպրոցի շրջանավարտ է: Նա նշեց, որ պարերի բեմադրությունն իրականացնում է դպրոցի շրջանավարտ պարուհի Քնարիկ Մարտիրոսյանը՝ անհատույց հիմունքներով:

Տնօրենը ընդգծեց, որ դպրոցի համայնքը հետևողական է լինելու՝ բացառելու որևէ դրամահավաքություն:

Տնօրենի տեղակալ Գոհարիկ Գևորգյանը տեղեկացրեց, որ միջոցառման տեխնիկական ապահովումը կիրականացվի կամավոր հիմունքներով իր դստեր կողմից, որը ևս մեր շրջանավարտն է: Դպրոցը ևս կտրամադրի առկա տեխնիկական միջոցները:

Ծնողական խորհրդի ներկայացուցիչները հայտնեցին իրենց պատրաստակամությունը՝ աջակցելու կազմակերպչական հարցերում, այդ թվում՝ անհրաժեշտ գույքի ապահովման գործում:

Տնօրենը առանձին անդրադարձավ ապօրինի դրամահավաքությունների խնդրին՝ կրկին հորդորելով խստորեն բացառել նման երևույթները: Նա ընդգծեց, որ որևէ ծնող իրավունք չունի նախաձեռնել դրամահավաքություն դպրոցի անունից, և այս հարցը մշտապես գտնվում է դպրոցի վերահսկողության ներքո: Նշվեց, որ դպրոցում ամեն տարի տրվում է համապատասխան հրաման՝ կանխարգելիչ նպատակով, և իրականացվում է շարունակական վերահսկողություն:

Տնօրենը նաև կոչ արեց ծնողներին զերծ մնալ ավելորդ շքեղությունից և ծախսատար միջոցառումներից:

Ծնողների կողմից հնչեց առաջարկ՝ ավարտական միջոցառումից հետո կազմակերպել համեստ խնջույք: Ծնողները հավաստիացրին, որ այն չի կրի ցուցադրական կամ ավելորդ ծախսատար բնույթ:

Տնօրենը նշեց, որ նման նախաձեռնությունները կարող են իրականացվել բացառապես ծնողների կողմից և չպետք է կապվեն դպրոցի հետ:

Ծնողական խորհրդի նախագահը ընդգծեց, որ դպրոցում երբևէ դրամահավաքություն չի իրականացվել, և բոլոր նախաձեռնությունները կազմակերպվել են բացառապես ծնողների կողմից՝ առանց դպրոցի ներգրավվածության:

Որոշեց– 2. Ընդունել ի գիտություն և ապահովել որոշման կատարման ընթացքը:

Լսվեց– 3. Այլ հարցեր

Տնօրենը տեղեկացրեց, որ հունվարին սահմանված կարգով կազմակերպվել են 12-րդ դասարանցիների պետական ավարտական քննությունները, որի արդյունքում որևէ սովորող անբավարար գնահատական չի ստացել: Նա նշեց, որ պետական ավարտական քննությունների կազմակերպման նպատակով 12-րդ դասարանցիները սահմանված կարգով ներկայացնում են դիմում՝ նշելով հանձնելու ենթակա առարկաները: Դպրոցում այս գործընթացը շարունակվում է մինչև ապրիլի 1-ը, իսկ ապրիլի 1-ից մինչև մայիսի 2-րդ աշխատանքային օրը ներառյալ դիմում-հայտերը էլեկտրոնային եղանակով փոխանցվում են Գնահատման և թեստավորման կենտրոնին: Սովորողներին տրամադրվում է ինչպես խորհրդատվություն, այնպես էլ անհրաժեշտ աջակցություն:

Տնօրենը անդրադարձավ նաև սովորողների դպրոց հաճախելիությանը՝ հորդորելով ծնողներին հետևողական լինել և բացառել անհարգելի բացակայությունները: Նա հիշեցրեց, որ 10–11-րդ դասարանների սովորողների դեպքում ուսումնական տարվա ընթացքում 200 ժամից ավելի բացակայությունը հանգեցնում է լրացուցիչ քննությունների հանձնման, իսկ տվյալ սովորողի հաջորդ դասարան փոխադրման հարցը որոշում է մանկավարժական խորհուրդը: 12-րդ դասարանների սովորողների դեպքում գործում է 60 ժամից ավելի բացակայության սահմանաչափի պահանջը:

Տնօրենը ներկայացրեց նաև 12-րդ դասարանների սովորողների պետական ավարտական քննությունների կազմակերպման վերաբերյալ հուշաթերթը՝ ընդգծելով, որ այն նպատակ ունի ապահովելու գործընթացի պատշաճ իրազեկվածություն և կազմակերպվածություն: Հուշաթերթը տրամադրվում է սովորողներին և ծնողներին՝ սահմանված կարգով ծանուցման միջոցով:

Տնօրենը հավելեց, որ քննությունների կազմակերպման և ուսումնական գործընթացի արդյունավետ իրականացման նկատմամբ իրականացվում է մշտական վերահսկողություն տնօրինության կողմից, իսկ դասղեկներն ու առարկայական ուսուցիչները ապահովում են սովորողների անհատական և խմբային խորհրդատվական աշխատանքները՝ քննություններին պատշաճ նախապատրաստելու նպատակով: Ծնողները պարբերաբար իրազեկվում են բացակայությունների, առաջադիմության և քննությունների ընթացակարգերի վերաբերյալ:

Նշվեց նաև, որ բացակայությունների հաշվառումը իրականացվում է էլեկտրոնային մատյանների միջոցով և պարբերաբար ամփոփվում է տնօրինության կողմից:

Որոշեց– 3. Ընդունել ի գիտություն և ի կատարումն:

Ծնողական խորհրդի նախագահ՝ **Աննա Սեդրակյան**

Քարտուղար՝ **Արևիկ Մելքումյան**